ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» «նոյեմբեր» 2025թ N ՄՈ-185-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության 2025 թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2025 թվականի ձմռան ամիսներին տեղացած ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը,գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով.

Որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա. Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Աշխատանքային խմբին /Ա..Այվազյան/՝ սույն որոշմամբ նախատեսված ուսումնասիրությունները և աշխատանքները ավարտել մինչև 2025 թվականի

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.gartughar@mta.gov.am

փետրվարի 11-ը և կատարման մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-01-24 11:23:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ով

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի 24--ի
N185-Ա որոշման

Աշխատանքային խումբ

Խմբի ղեկավար՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Անդամներ՝

Ա.Բեգլարյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Կ.Մարգարյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Недействительная подпись

VERIFIED OCSP 24.01.2025 10:57:25 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ **Ա.Հովհաննիսյան**